

151

ՅԵՐԱԺՉՏԱԿԱՆ ԲՐԵՍՏՈՄԱՏԻԱ

Ս. ԳՐԱԿ
ԿԼԱՍԻԿՆԵՐ



78
15-49

ՊԵՏՂՈՍ

781
1549

2013
-2008
7

ՅԵՐԱԺՁՏԱԿԱՆ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ

ԱՌԱՋԻՆ ՊՐԱԿ

(ԿԼԱՍԻԿՆԵՐ)

ՄՈՑԱՐՏ, ԲԵԹՅՈՎԵՆ, ՉՈՒԲԵՐՏ, ՇՈՒՄԱՆ

Կազմեցիմ՝

ՍԳ. ՄԵԼԻՔԻԱՆ, Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ս. ԳԱՍՅԱՐՅԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1933

54694

689

Գատ. կմբագիր՝ Մարտ. Մազմանյան
Տեխ. կմբագիր՝ Տաճատ Խաչվանյան
Մրբագրիչներ՝ Ս. Հակոբյան, Վ. Մանուկյան

Վաստակավոր յերաժշտագետ
ՍՊԻՐԻԴՈՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ
Տիշատակին



23439.66

ԱՌԱՋԱԲԱՆ

Մատաղ սերնդի յերաժշտական դաստիարակման գործին խոշոր արգելակ ե հանդիսանում դպրոցականի համար հատուկ յերաժշտական գրականութիւնն չունենալը:

Հ. Ս. Խ. Հ. Պետրասը դեկավարվելով Համկոմկուսի Կենտկոմի 1930 31 – 32թվերի վորոշումներով, դպրոցական շինարարութեան խնդիրները մասին, վորոնք հսկայական նշանակութիւնն ունեցան յերաժշտական բնագավառում, լուրջ ուշադրութիւնն ե դարձնում վերոհիշյալ խնդրի վրա ե ներկա տարում հրատարակում ե մի շարք դպրոցական յերաժշտական ձեռնարկներ, ինչպես որ. Միք. Միրզայանի «Նախադպրոցականի յերգեր ե խաղեր», մեթոդական բրոշուրը յերաժշտական հարուստ հավելվածով: Ս. Մանվելյան — Գալիկյանի նախադպրոցական յերգերի ժողովածուն, նույն հեղինակի «Ձմեռ» մանկական խաղը, Հ. Ստեփանյանի ե Կ. Չաքարյանի դաշնամուրի ե ջութակի ետյուղները ե պիեսները, վորոնք հատուկ գրված են յերաժշտական դպրոցների սկսնակ աշակերտների համար ե վերջապես ներկա յերաժշտական քրեստոմատիան, վորի նպատակն ե՝

ա) բնդարձակել ակմբային ե մանավանդ դպրոցական ուսուցիչները՝ արժեքավոր ե բազմապիսի նոր նյութերով:

բ) բնդարձակել դպրոցականի մտավոր տեսողաշուն ըստ ժամանակի ե ըստ տարածութեան՝ տալով նրան նմուշներ նոր դարի յերաժշտական կուլտուրայի զարգացման կարևոր փուլերի կլասիկ ներկայացուցիչների յերկերից, ինչպես ե արևմտյան ժողովուրդների ստեղծագործութիւններից ու Հոկտեմբերյան դարաշրջանի յերգերից:

Այսպիսով մեր նպատակադրութեան մեջ պահանջանքն ու գեղարվեստականը յերկյակ միութիւնն են կազմում:

Քրեստոմատիան պարունակելու յե նմուշներ՝

ա) յեվրոպական կլասիկ յերաժշտութիւնից,

բ) հեղափոխական յերգերից,

գ) արևմտյան ժողովրդական յերաժշտութիւնից:

Քրեստոմատիայի նեղ ծավալը հնարավորութիւնն չավեց լրիվ

ընդգրկելու մեր առաջադրած նպատակը, ուստի բավականացել ենք անհրաժեշտ նվազագույնով. ժամանակաշրջաններ կան, վոր բնավ չեն ներկայացված, կամ ներկայացված են շատ քիչ նմուշներով, մեծ հեղինակներ և նույնիսկ ժողովուրդներ կան, վոր դուրս են մնացել քրեստոմատիայի նեղ շրջանակներից, կամ միջանի աղքատիկ նմուշներ են հանդես բերված: Այս առաջին փորձի ընդունելութունը խորհրդալին հասարակության կողմից թերևս հնարավորութուն տա նույն նպատակն ավելի լրիվ՝ իրեն պատշաճ ծավալով հետագայում իրագործելու:

Քրեստոմատիան կազմված է հանգուցյալ վաստակավոր լեռաժիշտ Սպ. Մելիքյանի ղեկավարութեամբ:

Սույն պրակի հեղինակների (Մոցարտի, Բեթհովենի, Շուբերտի և Շումանի) կենսագրականները գրել է ընկ. Հ. Հ., նույնպես և յերգերի բնագրերը գերմաներենից թարգմանել է Հակ. Հարությունյանը:



ՄՈՑԱՐՏ

Մոցարտը ծնվել է Զալցբուրգում 1756 թ. հունվարի 27-ին: Դեռ մանուկ հասակում յերաժշտական արտակարգ վաղահաս զարգացում է ցուցաբերում. յերեք տարեկան հասակում դաշնամուր է նվագում, կարողանում է լսածն արագութեամբ ըմբռնել և վերարտադրել. չորս տարեկան հասակում իմպրովիզացիա չե անում: 1762 թվին հայրը, վորը նրա միակ ուսուցիչն էր, վեց տարեկան մանուկին և՛ նույնպես լավ դաշնակահար՝ քրոջը տանում է Մյունխեն, Վիեննա, Լայպցիգ և գերմանական մյուս քաղաքները, ինչպես և Շվեյցարիա, Հոլանդիա, Անգլիա համերգներ տալու: Ամենուր մանուկ դաշնակահարը հիացմունքի առարկա յե դառնում. յերաժիշտների

կողմից առաջադրված դժվարագույն խնդիրները վեց տարեկան Մոցարտը գյուղությամբ կատարում է: 1763 թ. նա հանդես է գալիս Փարիզում, վորտեղ և հրատարակվում են նրա առաջին սո- նատները:

1766 — 1769 թ.թ. լինում է Չալցբուրգում և Վիեննայում, վոր- տեղ ուսումնասիրում է իր նախորդ և ժամանակակից խոշոր յե- րաժիշտներին, ինչպես՝ Բախ, Հենդել, Ստրադելլի, Կարլսիմիլի Ավստրիայի կայսեր առաջարկությամբ 3 շաբաթում գրում է իր առաջին ոպերան: 1770 — 74 թ. թ. անցնում է Իտալիա, վորտեղ հանդես է գալիս մեծաթիվ նորանոր ստեղծագործություններով (4 ոպերա, 13 սիմֆոնիա, 24 սոնատ կայն), վոր հասարակության կողմից խանդավառ ընդունելություն են գտնում: 1775 — 80 թ. թ. տալիս է նոր համարներ (6 սոնատ, «Փարիզյան» կոչված մեծ սիմֆոնիան, հոգևոր նվագներ և խմբերգեր, 12 բալետային հա- մարներ): 1779 թ. պալատական որդանիստ է կարգվում Չալց- բուրգում: Այդ շրջանումն է գրում «Իդոմենիոս» ոպերան, վոր 1781 թ. Մյունխենում հաիշտակիչ տպավորություն է թողնում ունկնդիր հասարակության վրա: Այդ ոպերայում արդեն նա գե- րաճում է հին ավանդական յերաժշտության ազդեցությունից և ունիտատիվների ու խմբերգերի, ինչպես և գործիքավորման մեջ ինքնուրույնություն և նորություն է մտցնում, վոր իտալական կորրատուր յերաժշտության հանդեպ խոշոր առաջընթացություն է: Ինքնուրույնացման այդ պրոցեսը դեռ Մյունխենում արագ թափով առաջ է գնում: 1782 թ. գրած «Առևանգում Սերայից» գերմաներեն տեքստով ոպերան մեծ ընդունելություն է գտնում ամբողջ Գերմանիայում և ըստ վոգու գառնում է գերմանական ոպերայի զարգացման առաջին հիմնաքարը:

Չնայած բարոյական այս խոշոր հաջողություններին՝ Մո- ցարտը նյութական սուղ պայմաններումն է ապրում, պալատական քի գոյությունը պահպանելու համար մասնավոր դասեր տալ, ազ- մուրային կոնցերտներով հանդես գալ, պարեր և թեթև աշխատու- թյուններ գրել, պատի ժամացույցի համար յերաժշտական կտորներ հորինել կալն: Այս շրջանում տալիս է բազմաթիվ մանր ստեղծա- գործություններ և հնարավորություն չի ունենում իր սկսած յերկու- նոր ոպերաներն ավարտել:

1786-ից սկսվում է նրա ստեղծագործության վերջին և ամե- նարեզուն շրջանը: Գերլարված, նրա ամբողջ եյությունը հափըշ-

տակող, արագ ստեղծագործական աշխատանքը քայքայում է նրա առողջությունը: «Փիգարոյի հարսանիքը» հուշակավոր ոպերան գրել է 6 շաբաթում, այնուամենայնիվ գերազանց է իր կատարելու- թյամբ, գեղարվեստական մշակումով, թափով և կենդանի շնչով: 1787 թ. մեծ հաջողությամբ բեմադրվում է Մոցարտի հանճարեղ մեծ յերկերից մեկը՝ «Դոն-ժուանը», վորից և այս քրեստոմա- տիայում մի գուեստ է բերված: 1788 թ. մեկ ու կես ամսում 3 մեծ սիմֆոնիա յե գրում: 1789 թ. Պրուսիայի թագավորին է նվի- րում մի մեծ լարային կվարտետ: Ազնվական տերերն այդուհանդերձ նրան ծանր կարիքից չեն ազատում, և նա ստիպվում է գասարու- ներով հացը հայթհայթել: Կյանքի վերջին տարիներին գրում է Cosi fan tutte (1790), «Տիտոսի վոգորմածությունը» (1791 թ. 18 որում), իր հուշակավոր սեկվիենը և «Կախարդական սրինգը (Вол- шебная флейта)» ոպերան, վոր գերմանական ոպերայի ուրույն զարգացման հիմքն է գառնում:

Մեռնում է 1791 թ. Վիեննայում 35 տարեկան հասակում:

Մոցարտը թեև զլխավորապես ոպերայի վարպետ է, սակայն յե- րաժշտական ստեղծագործության բոլոր տեսակների գծով էլ իր հանճարեղ խոսքն է ասել: Ունի նաև մանկական գոհար յերգեր, վորոնցից այստեղ մի նմուշ ենք բերել: Իր մեծ նախորդների (Բախ և Հենդել՝ կրոնական յերաժշտության գծով, Գլուք՝ ոպե- րայի գծով՝ Հայդն՝ գործիքային յերաժշտության գծով) ժառան- գությունը յուրացնելով՝ նա յերաժշտական կուլտուրան թե ըստ ձևի և թե ըստ բովանդակության, մի այնպիսի բարձրության է հասցնում, վորի ազդեցության վոլորտն ըստ ժամանակի և ըստ տարածության մեծ ծավալ է ընդգրկում. ամբողջ կուլտուրական աշխարհը դեռ մինչև որս էլ հաճությամբ վայելում է Մոցարտի թողած յերաժշտական ժառանգությունը: Նրա վոճի բնորոշ հատկություններն են՝ նրբություն, ջերմ և խայտանկար յերանգավորություն, քնքույշ և մտերիմ անմիջու- թյուն, դյուրահաճ և վորորուն յեղանակավորում, հոգեպարար և մեղ- մահոս ներդաշնակություն և հյութեղ բարեշուքություն: Շատ բնո- րոշ է հենց իր համար իր կարծիքը յերաժշտության արվեստի մասին, վոր բերում ենք հորը գրած իր մի նամակից. — «Կրքերն այնպես ուժգին չպիտի արտահայտել, վոր անդուրեկան լինեն. ամենասոսկալի վայրկյաններին անգամ յերաժշտությունը չպիտի ականջը վիրավորի, այլ պետք է հաճույք պատճառի»: Այս եր պահանջում և այն լսարանը, վորին սպասարկում և վորի համար ստեղծագործում էր Մոցարտը: Այդ լսարանը տիրապետող ազնը-

վականութեան փափկակայաց հասարակութեանն եր, վորի համար
 յերաժշտութեանը նրբին և դյուրահաս վայելք եր՝ ի շարս հոգե-
 վոր և մանավանդ նյութական այլ վայելքների: Սակայն Մոցարտի
 յերաժշտութեանը լոկ ակնախտից զարգանկար չե, այլ համակված
 է թարմ, կայտառ, կենդանի շնչով: Նրա սոցիալական դիրքն ու
 ծագումն է, վոր արտահայտվում է այդ կենդանի թարմութեան
 մեջ: Այդ՝ ժողովրդից բզխող հոսանքն է, վորը Մոցարտի մոտ կար-
 կաչահոս աղբյուրի վտակ է և վորը հետագայում Բեթհովենի մոտ
 դառնում է գարնան վարար գետ, հորձանուտ ալիքներով պատ-
 ում է հին կաշկանդող ամբերը և նոր հունով հառաջ ընթանում:



ԲԵԹՀՈՎԵՆ

Լուգվիդ վան Բեթհովենը ծնվել է 1770 թ. դեկտ. 16-ին
 Գերմանիայի Բոնն քաղաքում: Պապը Գերմանիա յե գաղթել Անտ-
 վերպենից (Բելգիա) և ծառայութեան է մտել Բոննի կուրֆյուր-
 ստի մոտ վորպես պալատական յերաժիշտ: Հայրը նույն տեղում
 պալատական յերգիչ էր, իսկ մայրը՝ պալատական խոհարարի
 աղջիկ: Հայրը կյանքում ձախողված և հարբեցող մարդ էր, նա
 յերեխային վաղ հասակից աշխատանքի յե դնում և սրա տաղան-
 դից է յեկամուտ քամում: Այդ է պատճառը, վոր Բեթհովենը կար-
 գին ընդհանուր կրթութեան ձեռք չի բերում: Բեթհովենի յե-
 րաժշտութեան առաջին դասատուն հայրն է յեղել, վորի գլխավոր

ուշադրութիւնը վորդու դաշնահարութեան տեխնիկայի զարգացմանն եր ուղղված: Դեռ ութ տարեկան հասակում Բեթհովենը դաշնահարութեան յերւոյթ է ունենում Քյոլնում: 1780-ական թ. սկզբներին Բեթհովենն աշակերտում է հայտնի որգանիստ, զիրիժոր և կոմպոզիտոր Նեեֆե-ին, վորի մոտ և ստանում է իր առաջին յերաժշտական տեսական լուրջ կրթութիւնը: 11 տարեկանից վարձով աշխատում է Բոննի կուրֆյուրստի պալատում վորպես որգանիստ: Բոննը այդ ժամանակվա յերաժշտական-կուրտուրական կենտրոններից մեկն էր: Այգտեղ է նա ծանոթանում Փրանսիական Մեծ Հեղափոխութեան ժամանակակից և այդ հեղափոխութեան արամադրութիւններն արտահայտող Փրանսիացի յերաժիշտներ Գրետրիի, Գոսեկի, Մեհյուլի, Դալեյրակի, Բերթոնի, Սերուբինիի յերկերին: 1782 թ. տպվում է «Դրեսլերի մարշի վարիացիները», իսկ հաջորդ տարին՝ յերեք դաշնամուրի սոնատ: 1787 թ. գնում է Վիեննա, վորտեղ Մոցարտի ներկայութեամբ նվագում և հիացած գովասանքի արժանանում: Այգտեղ նա կարճ ժամանակով աշակերտում է Մոցարտին, վորի ազդեցութիւնը շատ խորն է լինում նրա վրա: Այնուհետև վերադառնում է իր հայրենի քաղաքը և շարունակում է իր աշխատանքը վորպես որգանիստ և ոպերային որկեստրի արտիստ: Իր յերւոյթներով նա հռչակվում է նաև իր հայրենի շրջանի սահմաններից դուրս:

Հեղափոխական խմորումների առաջին նշանները խոր ազդեցութիւն են գործում ըմբոստ, անհանգիստ և կատաղի հանրապետական Բեթհովենի վրա և ներշնչում նրա «Ո՞վ է ազատ մարդը» խմբերգը: 1779 թ. Բոննի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետի ուսանող է գրվում: 1792 թ. դարձյալ գնում է Վիեննա, վորտեղ և աշակերտում է Հայդնի և մեծ տեսաբան Ալբրեխտաբերգերի մոտ: Բեթհովենը յեղել է նաև խոշոր վիրատուղ և իր համերգային յերւոյթներով Պրագայում, Նյուրնբերգում, Լայպցիգում, Իրեզդենում հռչակ է ձեռք բերում: Թեև Վիեննայի ազնվական դասը նյութական փշրանքներով ոգնում է Բեթհովենին, սակայն սա՛ անկախ քաղաքացու գիտակցութեամբ՝ իրեն միշտ պատշաճավոր հեռավորութեան վրա յե պահում և իր հպարտութիւնը չի զիջում: Նա միշտ ել մնում է իր ժամանակի առաջատար գաղափարների բարձունքի վրա և իր նամակներում մեծ համակրանք է արտահայտում Փրանսիական Մեծ Հեղափոխութեան մասին: Իր շրջապատում նա հայտնի յեր վորպես արմատական հայացքների տեր:

1790-ական թվականներին Բեթհովենն սկսում է գերաճել իր

կրած ազդեցութիւնները Բախից, Մոցարտից, Կլեմենտիից և իր ինքնատիպութիւնն ավելի ու ավելի ցայտուն հանդես բերել: Այդ շրջանում գրած 10 դաշնամուրի սոնատները, 12 ջութակի սոնատները, 18 լարային կվարտետները, 12 գերմանական պարերն որկեստրի համար և այլ յերկերն արդեն ունեն Բեթհովենի վոճի հիմնական գծերը՝ կայտառ դինամիկան, հարուստ հակադրութիւնները, բազմազան խոր արամադրութիւնների ընդհատուն անընդհատութիւնը և այլն: 1800 թվից նա արդեն սեփական յերկերով համերգային յերւոյթներ է ունենում: Այնուհետև սկսում են աճել սիմֆոնիաների թիվը. — 1800-ին՝ առաջին սիմֆոնիան C-dur, վորի մեջ դեռ հին ձևերը գերակշռում են, 1802-ին՝ յերկրորդ սիմֆոնիան՝ D-dur, վորի մեջ Բեթհովենի տրույն գծերն ավելի ուժեղ են հանդես գալիս: 1803-ին՝ յերրորդ սիմֆոնիան կամ «Հերոսականը», վոր Բեթհովենի լավագույն յերկերից է և ունի հախուռն ռիթմիկա, ձոխ ներդաշնակութիւն, ուժեղ դինամիկա: Այս վերջին սիմֆոնիան Բեթհովենն ստեղծագործել է Փրանսիական Մեծ Հեղափոխութեան անցքերի անմիջական ազդեցութեան սակ և նվիրել է Նապոլեոնին. սակայն հետո հիասթափվելով Նապոլեոնից՝ դեպի հեղափոխութիւնը բռնած նրա դիրքի պատճառով, մասդրութիւնը փոխում է և նվիրում է հերոսութեանն սոհասարակ: Այդ ժամանակաշրջանում Բեթհովենը գրում է նաև շատ սոնատներ, կամերային և կոնցերտային համարներ:

Բեթհովենի հանձարն իր զարգացման գագաթնակետին է հասնում նրա կյանքի վերջին շրջանում, 1804 թվից հետո: Այս շրջանում է ստեղծագործում 4-րդ, 5-րդ և 6-րդ սիմֆոնիաները, «Լեոնորան», «Ճիդելիոն», 3 լարային կվարտետ, 2 դաշնամուրի trio 2 դաշնամուրի կոնցերտ որկեստրով և այլն: Այս շրջանի ստեղծագործութիւններն ունեն հարուստ բովանդակութիւն, լայն դիապազոն՝ հովիբրգական պարզութիւնից, ինքնասույզ քնարականութիւնից սկսած մինչև փոթորկոտ պոռթկումներ և մասսայական տեսիլներ:

Դեռ 1796 թվից Բեթհովենի մոտ նկատվում է սկանջի սկզբորոգ, վոր չի բուժվում և այն աստիճան հուսահատեցնում է Բեթհովենին, վոր նա մտածում է ինքնասպանութեան դիմել: Նրա արամադրութիւնների վրա շատ բացասաբար է անդրադառնում նաև նրա տնտեսական դրութեան վատթարացումը, վոր հետևանք էր Նապոլեոնի արշավանքների պատճառով առաջ յեկած ֆինանսական սնանկութեան և տնտեսական ընդհանուր քայքայման: Այնուամենայնիվ նրա ստեղծագործական թափը չի թուլանում:

1809-ին գրում է Es-dur դաշնամուրային կոնցերտը, 1810-ին «Եզմոնտը», 1812-ին՝ A-dur և F-dur սիմֆոնիաները: Նապոլեոնի՝ անկումից հետո վերապես տուրք այն ժամանակ բորբոքված ազգայնական տրամադրությունների՝ նա գրում է «Վայրկենական փառք» և «Վելլինգտոնի հաղթությունը», վոր թույլ գործեր են:

1815 — 21 թ. թ. չի ստեղծագործում: Ականջի հիվանդությունը զարգանում է, և Բեթհովենը բորբոքվին խլանում է: Նա մռայլվում է, կտրվում է հասարակական միջավայրից և խխունջվում է մտերիմների շրջանում:

1822 թ. վերջին անգամ առկայծում է նրա հանճարը. գրում է հոչակավոր Ծ-րդ սիմֆոնիան, վերջին 5 կվարտետները և C-moll սոնատը դաշնամուրի համար: 1824 թ. ներկա յե լինում Ծ-րդ սիմֆոնիայի ցուցահանմանը և դերբիֆորին ցուցմունքներ է տալիս տեմպի մասին: Յերբ նվագից հետո հասարակությունը խանդավառովացիա յե անում նրան, նա խլություն պատճառով վոչինչ չի նկատում և վոչինչ չի հասկանում. դերբիֆորն է նրա դեմքը շուռ տալիս դեպի հասարակությունը...

Բեթհովենը մեռնում է 1827 թ. ապրիլի 26-ին: Նա մեռնում է իր կյանքի մի շրջանում, յերբ մեծ հեռանկարներով հարուստ մի նոր ստեղծագործական փուլի առաջ էր իրեն կանգնած դգում. — «Մինչև այժմ յես միքանի տակտ եմ միայն գրել», — ասում էր նա:


Բեթհովենի հանճարի մեծությունը համեմատ է իր դարաշրջանի Ֆրանսիական Մեծ Հեղափոխության ժամանակի մեծության: Յեթե Ֆրանսիան բուրժուական հեղափոխությունը կատարեց քաղաքական սխրագործություններով, և Գերմանիան՝ «բանաստեղծների և փրիսոփաների այդ յերկիրը»՝ հոգևոր-կուլտուրական սխրագործություններով, ապա գերմանացի Բեթհովենն այդ հեղափոխությունը կատարեց յերաժշտական կուլտուրայի ասպարիզում: Նրա ստեղծագործությունների մեջ հախուռն թափով արտահայտված են հեղափոխական դեմոկրատիայի տրամադրությունները: Նա պայքարում էր ձայներով «մարդկության ազատագրության» համար, ձգտում էր «խավարից դեպի լույս», անհատական տանջանքից դեպի կոլեկտիվ ազատագրություն: Նրա անհանգիստ ուրիշական, հակադիր տրամադրությունների հախուռն հերթափոխությունը, տեսիլների մասսայականությունն առանց մանրամասների խճողման, լիանչյուն ներգաշնակությունը, թափով դինամիկան, խոր ընդերքից ժայթքող իր ուժին վստահ կոխվը, — այդ բոլորն իր մեծ ժամանակի ցուրն են: Հեղափոխական դեմոկրատիայի հետ

միս ու արյունով ներծաված լինելուց է, վոր Բեթհովենն այնպես հրաշալի կերպով ողտագործում է դեմոսի յերաժշտության տարրերը:

Բեթհովենը յերաժշտական կուլտուրայի մեջ մի այնպիսի խոշոր բարձունք է, վորի ստվերը տարածվում է շատ հեռու իր ժամանակից և միջավայրից:

Բեթհովենը գերազանցորեն ինստրումենտալ ստեղծագործող է, թեև վոկալ յերաժշտության դժով ել տվել է խոշոր գործեր:

Նրա փոքր ֆորմաներից է ծնունդ առնում հետագա ուսման-ախճը, վոր սկիզբն է առնում Բեթհովենի անմիջական հետնորդ Շուբերտով:



ՇՈՒԲԵՐՏ

Շուբերտը ծնվել է 1797 թ. Վիեննայում, յերաժշտական ընտանեկան միջավայրում: Վիեննան դեռ վաղուց, ինչպես Մոցարտի և Բեթհովենի կենսագրություններից ել մեզ հայտնի չէ, Յեվրոպայի յերաժշտական կուլտուրայի խոշորագույն կենտրոններից մեկն էր այդ ժամանակաշրջանում: Յեվ Շուբերտի խոշոր քանքարը ծնունդ է առնում և զարգանում և շատ նպաստավոր միջնորդում՝ ընտանիքի և բնակավայրի յերաժշտական միջավայրում: Դեռ մատաղ հասակից յերաժշտական արտակարգ ընդունակություններ և ցույց տալիս: 11 տարեկան հասակում ընդունվում է պարստական

23439 - 66 54945

կապելլան, վորակող սովորում է յերգեցողություն, յերաժշտության տեսություն, շատ գործիքներ նվագել: Ընտանեկան տնտեսական ծանր դրությունն ստիպում է Շուբերտին այնուհետև մասնավոր դասեր տալու և այդպիսով ոգնել կարենալու իր բազմամղամ չքավոր ընտանիքին: Յեռանդուն ջանասիրությամբ հետաքննին և խորամուխ ուսումնասիրություն է յենթարկում իր մեծ նախորդների և ժամանակակիցների յերաժշտական ստեղծագործությունները, մանավանդ Գլուքի, Մոցարտի և Բեթհովենի յերկերը: Խոշոր ազդեցություն է կրում առանձնապես Բեթհովենից, վորի շարունակողն է դառնում Շուբերտը վոկալ յերաժշտության, մասնավորապես յերգի կուլտուրայի գծով: Շուբերտը յերգը մի այնպիսի գեղարվեստական բարձրության է հասցնում, վոր մինչև որս էլ յերգի համերգների ծրագրերում Շուբերտի ոտմանները կարևոր տեղ են բռնում: Նա յերգին տվեց գեղարվեստական ձև և ուրույն արժեք և վիթխարի շափով ձոխացրեց վոկալ համերգային ռեպերտուարը: Միանգամից մեծ հռչակ ստացավ իր «Անտառի արքան» բալլադով (բանաստեղծություն Գյոթեյի), վոր իր տիպի լավագույն նմուշներից մեկն է ամբողջ մարդկային յերաժշտական կուլտուրայի պատմության մեջ և վորը ներկա քրեստոմատիայում բերել ենք (յույս է տեսել 1816 թ.): այնուհետև իրար յետևից հրապարակ են գալիս «Անդաստականը», «Արցունքների ներբողը» (բանաստեղծություն Շլեգելի), «Զուլեյկա» (բան. Գյոթեյի) և այլ գլուխգործոցներ:

Իր այդ յերգերի մեջ Շուբերտը ցուցաբերում է մեյրզիաներ հղանալու անգուզական ձիրք, հոգեկան կորով, ազրուհների խորություն և բազմազանություն: Ակկոմպանիմենտն, այլևս մայր յեղանակի ութմն ու տակտը զորացնող ստորագաս մոմենտ չէ Շուբերտի համար, այլ ունի հարաբերաբար ուրույն գեղարվեստական արժեք և հատուկ մշակման է յենթարկվում: Ակկոմպանիմենտը վոչ միայն մայր յեղանակի տպավորությունն է ուժեղացնում, ներքուստ համաձուլված է նրան, այլ և հենց առանձին վերցրած՝ ներկայացնում է մի ինքնատիպ, ամբողջական նվագ: Ազգային-ժողովրդական շաղախը կազմում է Շուբերտի յերաժշտության կարևոր տարրերից մեկը, վոր նա գեղարվեստորեն վերակերպում է և իր մեծ նախորդ Բեթհովենի համեմատությամբ՝ բարձրության մի նոր աստիճանի յե հասցնում: Բեթհովենն իր կյանքի վերջին շրջանում հաիշտակված հրճվանքով էր լսում նրա յերգերը: Ավելի քան 600 ոտմանս է գրել:

Նույն մեծ տաղանդն է ցուցաբերում նաև դաշնամուրի և



սիմֆոնիկ աշխատութիւններում: Նրա C-dur և F-moll ֆանտազիաները, impromptu-ները, moments musicals-ը սոնատները պառունակում են հարուստ յերևակայութիւն, ներդաշնակելու բազմազանութիւն, ջերմ շունչ, կորովի կայտառութիւն:

Գրել է մոտ 20 ոպերա, բայց անհաջող. թեև կան բազմաթիւ կտորներ, վոր ուժեղ ցոլացնում են նրա բարձր տաղանդը: Անզուգական վարպետ է գերազանցապես մանր ֆորմաներում: Ունի նաև կրօնական յերկեր, վորոնք ավելի շուտ բնութիւյան և տիեզերքի զգացմունքի խորասույգ արտահայտութիւնն են:

Իր ստեղծագործական բեղունութեամբ և արագութեամբ հիշեցնում է Մոցարտին. գրածները յերկրորդ անգամ փոփոխութեան չի յենթարկել ժամանակ չունենալու պատճառով: Ինչ նրա դյուրագրգիռ, տպավորվող, կենսածարավ հոգին ստանում էր արտաքին աշխարհից, իսկույն խմորվում էր նրա ստեղծագործական բովարանում և արտացոլում նրա յերգերի մեջ: Հենց այդ յարված աշխատանքի պատճառով էլ կորցնում է առողջութիւնը 1828 թ. մեռնում է 31 տարեկան հասակում, յերբ նա դեռ շատ բան ուներ տալու աշխարհին:



ՇՈՒՄԱՆ

Յեթե Շուբերտը ումանտիզմի սկզբնական փուլի խոշորագուն ստեղծագործողն էր, Շումանը ումանտիզմի բարգավաճման շրջանի մեծ ներկայացուցիչն է, վոր յերաժշտական կուլտուրան մի նոր հանգրվանի յե բարձրացնում:

Շումանը ծնվել է Սաքսոնիայի Տվիկաու քաղաքում 1810 թ. հունիսի 8-ին: Թեև դեռ փոքր հասակից յերաժշտական ընդունակութիւններ է ցույց տալիս, սակայն մոր ցանկութեամբ Լայպցիգում իրավաբանութեան ուսանող է գրվում և միաժամանակ դաշնամուրին է հետևում: Լայպցիգն այդ ժամանակ խոշոր յերաժշտական կենտրոն էր: Ամբողջ հոգով յերաժիշտ Շումանին այդ

գայթակղեցնող միջավայրը խանգարում էր իր համալսարանական պարապմունքներին հետևելու, ուստի նա մոր ցանկությամբ փոխադրվում է Հայդելբերգի համալսարանը: Այստեղ էլ Շումանը չի կարողանում առանց յերաժշտության ապրել: Յերաժիշտ մասնագետները խորհրդով մայրը համաձայնվում է, վոր վորդին վերագառնա Լայպցիգ և զբաղվի յերաժշտությամբ: Յեվ Շումանը հիվանդագին յեռանդով նվիրվում է իր սիրած արվեստին: Սկսում է դաշնահարությամբ, այնքան շատ է աշխատում, վոր աջ ձեռքն անեմբա յե ստանում: Այնուհետև ամբողջ թափով անձնատուր է լինում կոմպոզիցիային և յերաժշտական գրականության ուսումնասիրության: 1833 թ. հաջող յելույթ է ունենում իր impromptu-ով և այլ սեփական ստեղծագործություններով, վոր հետագայում նրա հայտնի յերկերի շարքն են մտնում: Այսպիսով սկզբից և եթ, շնորհիվ իր յեռանդուն աշխատանքի, իր առաջին իսկ յելույթի ժամանակ նա հանդես է գալիս վորպես մեծ վարպետ և հաստատում է իր տեղը պատմության մեջ Մոցարտի, Բեթհովենի, Շոբերտի շարքում: Նույն խանգավառ յեռանդով նա նվիրվում է ժուրնալիստիկային. 1834 թ. հրատարակում է Neue Zeitschrift für Musik» թերթը, վորտեղ նա կատարի պաշքար է ծավալում յերաժշտական ավանդամուրության և պահպանողականության դեմ: Ձբաղվում է յերաժշտական քննադատությամբ. նրա թերթում իրենց արժանի գնահատությունն են ստանում Մենդելսոնը, Բերլիոզը, Շոպենը, Լիստը, Բրամսը և այլ տաղանդներ: Հրապարակախոսական գործունեյությունը տևում է մինչև 1844 թ.: Այդ ժամանակի ընթացքում գրում է իր անմահ յերկերը դաշնամուրի համար (սիմֆոնիկ եայուդներ, կարնավալ): Այնուհետև գրում է G-moll և F-moll սոնատները, հանձարեղ C-dur ֆանտազիան, Davidsbündlertänze, «Մանկական տեսարաններ» և բազմաթիվ այլ հուշակավոր յերկեր: Իր ժուռնալը փոխադրում է Վրեննա ավելի լայն ազդեցության շրջան ձեռք բերելու հույսով: Այստեղ նա ծանոթանում է Շոբերտի ստեղծագործություններին և նպաստում նրանցից շատերի հրատարակմանը: 1840 թ. ամուսնանում է իր նախկին ուսուցիչ Վիկի աղջիկ Կլարայի հետ, վոր ներշնչման ուժեղ ազդակ է դառնում նրա համար. մի տարում 100-ից ավելի քնարական յերգեր է ստեղծում, վորոնց շարքիցն է այստեղ իբրև նմուշ բերված «Բանաստեղծի սերը» ցիկլը: 1841-ին գրում է իր առաջին սիմֆոնիան և այլ յերկեր և սկսում է 2-րդ D-moll սիմֆոնիան: 1842-ից սկսվում է կամերային յերաժշտության ստեղծագործության բեզուն շրջանը. մի ամսում 3 կվարտետ է գրում,

այնուհետև իրար են հաջորդում մեկը մյուսից ավելի տաղանդավոր յերկեր: 1843 թ. գրում է մի մեծ կանտատ, վոր խանգավառ ընդունելություն է գտնում: Սկսում է «Փառասոր», սակայն լարված աշխատանքից առաջացած նյարդային հոգնածությունը թույլ չի տալիս այն վերջացնելու: 1845 թ. դառնում է հին ձևերին — գրում է 6 ֆուգա, կանոններ, վերջացնում է A-moll կոնցերտը և C-dur սիմֆոնիան: 1847-ից զբաղվում է ոպերային ստեղծագործությամբ, ուվերտյուրաներով և մեծ կտավի յերկերով: 1852 թվից նկատվում են հոգեկան հիվանդության առաջին նշանները, վոր արագությամբ զարգանում են. 1854-ին փոխադրվում է Բոննի մոտի բուժարանը, վորտեղ և 2 տարի անց մեռնում է (1856 թ. հուլիսի 29-ին):

Շումանի հիմնական հատկանիշներն են՝ յերևակայության թռիչք հղացման նորություն, ինքնատիպություն, ներդաշնակություն, մելոդիկ մտածողություն, զգացական նրբություն: Վոկալ յերաժշտության մեջ նա արտահայտիչ է, յերաժշտությունը ներծուլում է բառին և բառի բնորոշ արտահայտությունն է հանդիսանում: Ակկոմպանիմենտն ավելի շուտ դաշնամուրի պարտիա յե: Տեքստի ընտրության մեջ խիստ խտրական է և ճաշակավոր: Սիմֆոնիաները ցայտում են թարմությամբ, պատկերավորությամբ, անմիջականությամբ և որիդինայությամբ: Սոչորագույն լիրիկ է, վոր արտահայտիչ է իր ժամանակի մանր-բուրժուական ինտելլիգենտի ամենամտերիմ զգացմունքներն ինդիվիդուալիստական գունավորությամբ և իր ամբողջ եյությամբ դեմ է ամեն քաղքենիական տափակության:

ՈՐՈՐԵՐԳ

Andante.

Վ. Ս. ՄՈՏՍՐԵՏ

1. Ջան, իմ բա-լիկ սի-բա--տուն,
2. Բախ-տրդ չու-ծի ել վոչ -- վախ,
նան են ա-բի բիկ բըռ-
խաղ են ա-նում միշտ ած --

չուն,
հագ,
Յիրի են մը-տեկ դաշտ ու աբտ,
դե նան ա-բա դառ մուշ -- մուշ,

ժիր մե-դուն ել ե լը-ռեկ,
վար բե-գի տամ մեղք ու նուշ,
պարզ լու-սըն-կան ել հան-
նան ա-բա շուտ մե-ծա-

դարտ
Յա ա
իբ ար-ծաք բողմ և փը -- սել.
աչգա ա-րե-վի հետ բա -- նաա.

նա-ձիկ ա-բա շո-ղի տակ,
նա-ձիկ ա-բա շո-ղի տակ,
լուս-ձի ար-ծաք բո-ղի տակ, նա-
լուս-ձի ար-ծաք բո-ղի տակ, նա-

ձիկ — նա — ձիկ .
ձիկ — նա — ձիկ .

ՄԱՆՈՒՇԱԿՐ

ԳՅՈՒԵ

Allegretto.

Վ. Ս. ՄՐՈՑԱՐԵ

Գի-կը ճոխ զի-նե-յի յես, զիք մի վար-կյան -- մը-տեր-մու-րյանք սո-կեր նա ինձ, զը-
 մեր կրնձ էին, ուր-քոչ-նե-յի յես, նեչ -- տու-գիծ՝ ար -- բառ մար-մեհի իր
 մի մա-նու-շակ սի-րան, կա-պույտ: Մի հոգ վա-նի քի -- թեղ վա-տով, ու-րախ, ու-րախ
 ցազ նը-բա մա տով. յեր -- գով զը-վարք, ան-հոգ, ան -- փույթ:
 ..Այս յի-րա-նի-քը նու-րյան վես, ծա-

զը-տա -- քյանք: Բայց, ա՛յս ազ-ջիկն ան-ցալ ան-հոգ, ան-տես ա-
 բազ սի-րա-բար-բախ. ծագ-կին տար-յեղ վառ եզ, ան-փույթ. Մե-տով, բայց գան ծա
 զի-կը հեղ, վար սի-րախ հա-րա տա կեզ վառ-նե-թի տակ --- գան
 -վեց -- ոյզ պես խեղճ մա-նու-շակ խեղճ մա-նու-շակ, սի-րան կա-պույտ:
 arpeggio fa tempo p

ԴՈՒՆՏԻՆՈ

Դ. ՃՈՒՈՆ

Ձեռ-բոց տուր ինձ, ո. կյանք իմ, անկ գր-համբ իմ դրո-յակ. ո. մի մեր-ժի բազ-

Andante.

p

ՅԵՐԼԻՆԱ

ճանճ իմ, ո' յե'կ, շուտ յեկ, եզ-յակ: Իմ սիր-տը բա-բա-խում է, ա սուս' այդ մի' ա-

ճի. չե', չեմ գա, յե վա-խում եմ ինչ վար մի վատ-բա-նից, ինչ վար մի վատ բա-

Դ. ՃՈՒՈՆ **ՅԵՐԼԻՆԱ** **Դ. ՃՈՒՈՆ**

ճից: ո, քեզ վա-զուց սի-բի եմ. Մա-զետ-տուն, վա, կա-րել է. ո, քեզ եա-մար վա-

ՅԵՐԼԻՆԱ **Դ. ՃՈՒՈՆ**

վում եմ. Ախ, ար-դեն յե տար-վում եմ, ար-դեն տար-վում եմ, ար-դեն տար-վում եմ ճեկ, ո',

ՅԵՐԼԻՆԱ

յեկ: Ձեռ-բոց տուր ինձ, ո կյանք ի մ: Ձե', չեմ գա, յե վա-խում եմ.

ՅԵՐԼԻՆԱ

Այդ յե սիրտ չեմ ա-նի: վա-խում եմ վատ-բա-

Դ. ՃՈՒՈՆ

ո, յեկ, շուտ յեկ, եզ-յակ: ո, յեկ գր-համբ դրո-յակ:

ճից: Մա-զետ-տուն, վա, կա-րել է. Ախ, ար-դեն յե տար-

ո, քեզ վա-զուց սի-բի եմ. ո, քեզ եա-մար վա-տ-վում եմ.

Դ. ՃՈՒՈՆ **ՅԵՐԼԻՆԱ**

վում եմ, ար-դեն տար-վում եմ, ար-դեն տար-վում եմ. ո, յեկ, ո, յեկ դե-լավ,

ՄԻԱՍԻՆ

Գր-ճանճ, գր-ճանճ ի-բար հետ, ո ի՞նչ վա-յիվ յերկ-ճա-վետ, ի-բար սի-բել հա-վետ:

Allegro.

գր-ճանճ, գր-ճանճ ի-բար հետ, ա՛ ի՞նչ վա-յիվ յերկ-ճա-վետ ի բար սի-բել հա-

Դ. ԺՈՒՈՆ **ՅԵՐԼԻՆԱ**

վետ, գր-ճանճ, գր-ճանճ, գր-

Դ. ԺՈՒՈՆ **ՄԻԱՍԻՆ**

ճանճ, գր-ճանճ, գր-ճանճ, գր-ճանճ ի-բար հետ, վա-յիվ և յերկ-ճա-

վետ ի-բար սի-բել հա-վետ:

ՀՆՉՈՒՄ Ե ՇԵՓՈՐԸ

Գ Յ Ո Յ Ե Լ. ՌԵՐԻՆՍԿԻ

Vivace.

Հրն-յում և շե-փո-րը, քրն-բուկ են հա

բում գին վաճ՛ սրբ տիտ տե ըր գոր-հերն և վա-յում, իբ-բար-ճր Ե՛ գա-լը շար-ճանճ և բա-

ճա-կը ու սիր-տը տրո-փում, ա-րյուն և յե ում - այր մարդ լի-հե-լու տե՛նց հա-

գիս և վա-ռում, այր մարդ լի-հե-լու տե՛նց հա-գիս և վա-ռում:

cresc.

Կու - զեմ հե - րո - սիս հե - տե - վել ան - վե -

հեր, անց - նել հը - բա հեոտ քա - ղաք - ճեր ու գյու - ղեր:

փա - խալ թը - ճա - մին՝ զար հի

տակ հրա - զե - նի. այր մարդ ծըն - վա ծին ա՛խ հա.

զար յե - բա - ճի, այր մարդ ծըն - վա - ծին ախ հա - զար յե - բա - ճի.

1. հա - զար յե բա ճի.

2. ճի, ա՛խ հա.

զար յե - բա - ճի.

dimin.

dimin.

dimin.

Շ Ո Ղ Ի Կ

Allegretto.

Կատակերով յեմ աշխուժ, ըայց վեռ արագ

Լ. ԱՅԹՆՈՎՆԵ

p dolce

Մե-ծակ ե-յիժի յեա ա. Շո-ղիկ, ա-սի՛ ըբաղ մի պա-

cresc.

չեմ, Շո-ղիկ ջան, բո՛ղ մի բո՛ղ մի քեզ պա-չեմ: Շո-ղիկն ա-սալ՛ չե՛, չեմ բա-

cresc.

դի, չե՛, չեմ բա-դի, չե՛, չեմ բա-դի, չե՛, չեմ բա-դի - - - - - տե՛ս, կը կամ-

cresc.

poco ritard. *a tempo*

չեմ, խե-լո՛ւ, ա՛յ տը-դա, խե-լո՛ւ, խե-լո՛ւ մը-նա՛, տը-դա, կը կամ-չեմ:

poco ritard. *cresc.*

cresc.

ե՛ Շո-ղի-կիժո ո՛վ կը լը-սի, ո՛վ կը լը-սի, գո-նով մի պաչ - - - - - ա-

f *p* *cresc.*

Poco Adagio.

աա, գո-նով մի պաչ - - - - - առա-ււ. բո-ղի փա-

f *p*

Tempo I. *fz*

խ ա ա-սի՛ հի-մի գո-նա, դե՛,

tr *sf* *p*

Ժ ա տ ա լ ո Վ

դե՛. ինչ-քան կու-գես գո-նա. դե՛, հիմի ինչ-

cresc. *poco ritard.*

քան կու-գես՛ գո-նա՛ ինչ-քան կու-գես՛ գո-նա՛, Շողիկ, ինչ-քան կու-գես՛ հիմի-գո-նա - - - - - ինչ

cresc.

a tempo

քան կու-գես՛ հի-մի գո-նա, դե՛ինչ-քան կու-գես ինչ-քան կու-գես գո-նա:

p *mf* *cresc.* *f*

ԱԼ ՎԱՐԴԸ

ԳՅՈԹԵ

Ֆ. ՆՈՒԲԵՐՏ

ԳՈՂՏԻԿ (♩ = 60)

Մի մա-նուկ գաշ - տում տե-սով նոր բաց-ված ալ վար դր

pp

բանդ յե-լած սրբ - տով հա-սով յեկ ու-զում եր հա-տո-տել զառ դաշ-տի վառ

cresc.

nachgebend *wie oben*

գար - դը. ու մո - տից սի - սով յի - տել. նոր բաց-ված ալ վար - դր:

pp

Յեռ հի - մա պի - տի պո-կեմ նոր բաց-ված ալ վար - դր:

վարդն ա- սայ են - առ ծա-կեմ, վար կյան-ում դու միշտ եի - շես' զառ դաշ-տի վառ

cresc.

nachgebend *wie oben*

գար - դը. չի ու-զում վը-ճառ քա - շել նոր բաց-ված ալ վար - դր:

pp

Բայց մա-նուկ եր թիրտ պո-կեց նոր բաց-ված ալ վար - դը վարդն առ-սիրտ տը-

դին ծա-կեց, զոր ար-ցանկ քա - վեց ա - ղի. զառ դաշ-տի վառ գար - դը:

cresc.

nachgebend *wie oben*

ու զոն-վեց ծագ-կանց ծա-ղիկ' նոր բաց-ված ալ վար - դը:

pp

ԱՅԳԵՐԳ

Allegretto.

Յ. ՇՈՒՆՆԵՐ

Musical notation for the first system, including treble and bass staves with piano (p) and sforzando (sf) markings.

Musical notation for the second system, including vocal line and piano accompaniment with piano (pp) and fine markings.

Musical notation for the third system, including vocal line and piano accompaniment.

Musical notation for the fourth system, including vocal line and piano accompaniment.

Musical notation for the first system on page 37, including vocal line and piano accompaniment.

Musical notation for the second system on page 37, including vocal line and piano accompaniment.

Musical notation for the third system on page 37, including vocal line and piano accompaniment with forte (f) and decrescendo (decresc.) markings.

Musical notation for the fourth system on page 37, including vocal line and piano accompaniment with forte (f) and decrescendo (decresc.) markings.

Յերն ե՛ն կա - ծու՛մ, այդ պե՛ս ի՛մ սիրո՛մ եւ - առ - չու՛մ ք, եւ - ծու՛մ, այդ - պե՛ս ի՛մ

սիրո՛մ եւ - առ - չու՛մ ք, եւ - ծու՛մ

Մը - ույ՛լ ու մա՛ռ, ժայ - ուի պե՛ս դա - ժան, վիշտս եւ մը - ծու՛մ ան -

խախտ եւ - վի - տյան, վիշտս եւ մը - ծու՛մ ք ան -

խախտ ան - խախտ եւ - վի - տյան, վիշտս եւ մը - ծու՛մ ան - խախտ եւ - վի - տյան,

ծովն հող - մա - վար, սել մութ ան - տառ, ժայ - ու դա - ժան՝ ի՛մ եւս գըր -

վան. ծովն հող - մա - վար, սել մութ ան - տառ, ժայ - ու դա - ժան -

ծո՛ւն հող - մա - վար, սել - - - մութ ան - տառ՝ ի՛մ

եւս - գըր - վան:

ԱՆՏԱՌԻ ԱՐԲԱՆ

(ԳՅՈՒԵ)

Արագ (♩=152.)

Յ. Բ. ԵՆԻՆՅԱՆ

The first page of the musical score for 'Antar' consists of five systems of music. Each system includes a vocal line and a piano accompaniment. The piano part features a prominent triplet pattern in the left hand. The lyrics are written in Armenian and are: 'Այդ ո՛վ է սուրբս' (Ayjd ov' e surbs), 'ան-տա-ռո՛վ մը' (an-ta-ron'v m'ez), 'քի՛ն' (k'hin), 'հե՛ծ-Յարրն' (h'ed-yar'rn), 'ե այդ ու մա-տաղ' (e ayjd u ma-tal), and 'վար' (var).

The second page of the musical score for 'Antar' consists of five systems of music. Each system includes a vocal line and a piano accompaniment. The lyrics are: 'դի՛մ: Իբ հար լամ-ջի՛ն' (d'im: ib har lam-je'hn), 'գը-լա-իլը քի-ֆիլ' (ge-lyal'lye k'hi-phil), 'ծած-' (ts'ad-), 'կիլ' (kil), 'ե դիմ-բը յիլ կուչ յե-կիլ:' (e dim-b'ez yil k'uch ye-k'ilye:), 'Ի՛նչ-բ' (incheb'), 'ծած-կիլ' (ts'ad-k'ilye), 'ե յե-քիս' (e ye-k'is), 'քա-լիկ շա՛ն:' (khalik shan:), 'Հայր, չե՛ս տես-Յամ' (Zayr, che's t'es-yam), 'ար-բան ան-տա-ռի' (ar-ban an-ta-ron'i), 'տե՛ս, բա՛ց ու-ճի' (tes, bag' u-je'hi), 'Յա ու պատ-մալ-ճան:' (ya u pat'mal-jan:).

Մը - շուշ ե դա, շուքն ե ծա-ռի:



Ա - րի, ինձ հետ, սի - բուն բա -



իկ, յեւ շատ աւ - ճիմ սի - բուն խա - դա -



իւ, ճախ - շուքն մար - գեր ու կար - միր վար -



դեր, վա - կի - բիլ հա - գուստ ու գառ - վառ գար - դեր: Հայ -



րի'կ ջան, հայ - րի'կ ջան, մի - բե չե'ս լը - սում, բե ին'չ ե նա կու - մա - ցաի ինձ ա -



սում: Հաճ - գիտ կաց, բան չը կա, այ վոր - դի. սա - սափն ե



դա չոր - ցած սա - դար - քի: Սի - բուն բա - լիկ, իմ սու - լատն ա - րի. աղ - ջիկ -



ճե - րըս քեզ են սոյա - սում սի - բով, ճը - բանք քեզ հետ կը բոռ նեն շուրջա - րի, ա -



բոր կա - սեն քեզ հո - գե - բով. յեր - գե - բով, ա - բոր կա - սեն քեզ հո - գե - բով յեր - գե - բով:



հայ-րիկ ջան, հայ-րիկ ջան, հա-պա լավ նա-յի, պա-րու՛մ են տեսա՞ղ ջիկ-

Յերձ ար-խա-յի: Ա՛յս վո՛չ, բա-լիկ, այն-տեղ ա՛յ, հե-ս-

decresc.

վա՛ւ խա-տերձ են մար-դի քա-մարց ո-րոր-վա՛ւ:

cresc.

վոր-հան զի-րու՛մ եմ քեզ, հրա-պու թի՛ս պա-տա-ձի, կամ-

p *pp*

հա՛յ յիկ, բե-չե, ա՛յ գո-ռով կը տա-ձեմ, Հայ-րիկ, ա՛յս հայ-

mf

րիկ ջան, բըռ-ձեց ինձ համ-կարծ. վա՛յ, ինձ տա-ձում ե ար-

sf

խա՛ն առ-դարձ խը-փու՛ւմ ե հայ-րը ձի-

sf

ու գա-վա կի՛ն, կըրծ-քին սեղ-մել ե մա-րդ գա-վա

cresc.

կի՛ն: Հա-ձում ե տու՛ն ա-հից սա-

ff

առձ, ու ցած բե-րու՛մ իր վոր-դու՛ն մե-ռած

Recit. *Andante.*

sp *pp*

ԲԱՆԱՍԵՂԹԻ ՍԵՐԸ
(ՀԱՅԵՍ)

ՅԵՐԵՎԱՆԻ ԲՈՒԿՍԵՐՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Կարգադրություն

ԵՐԵՎԱՆ

Մեծ

Յ ե թ թ զ ա ո մ ա յ ի ս ն յ յ կ ա Վ օ թ ռ ու ճ ,

գ ա ս օ թ օ յ ե թ թ թ ր ա ճ Վ ե ճ ռ ա ճ կ ա ճ ե ճ Կ օ

օ թ ռ ու ճ օ թ ռ ու ճ ր ա ճ Վ ե ճ ի թ օ թ ռ ու ճ

ritar.

Յ ե թ թ զ ա ո մ ա յ ի ս ն յ յ կ ա Վ օ թ ռ ու ճ

Ր ո թ ռ ա յ լ ա յ լ ե ճ Վ ե ճ ա թ ռ ու ճ յ ե

Գ ե ճ ա թ ռ ու ճ ռ ա յ լ ա յ կ թ ա թ ռ ու ճ ի թ Կ

ր թ ռ ու ճ

tar. dan. do

Վո: արագ

48.

p

Ար-ցաւե-նե-րիս փր-քի եմ ծագ-կում-քը գառ վառ մար-գե-րի. հա-

ա ա - չաւե-նե-րս դար-եկի եմ հա-մերգ սո-խակ-նե-րի. Յեկ յերբ սըր-տա - գին սի-

բ ես ինձ, ծագ - կումն ա - մն ընդ գար - - գեկ, բ ո գ բ ո -

ritard.

Վիչ մայ - նով սո-խակ - նե - - ըր միշտ ընդ եա - մար յեր - գեմ

Կ ա յ տ ա ռ

mf

Յեր-քե-մըն սի-րում ե-յի յեա խե-լս հեղ գառ շու-շանն ու ալ վարդն ու աբ-

փիռ լու-սա-վառ. նը-րանց չեմ սի-րում հի-մա յեա սի-րում եմ մի-այն լու-սա-բույր, վարդա-

ritard.

բյուր իմ յա-րին, իմ յա - - ըր ինչ հա-մար ար-դեմ քե շու-շանն և, քե վարդ ու աբ-

փի մի - ա - սին, հի մա յեա սի-րում եմ մի-այն լու-սա-բույր, վարդաբույր ու մա-հար իմ յա-

ritard.

րիս իմ յա-րին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝	
Մոցարտ	7
Բեթհովեն	11
Շոբերտ	16
Շուման	19

ՄՈՅԱՐՏ — Որբերգ	22
Մանուշակը	24
Դուեռնո	26
ԲԵԹՅՈՎԵՆ — Հնչում ե զեփոր	29
Շողիկը	32
ՇՈՒԲԵՐՏ — Այլ վարդը	34
Սյդերգ	36
Հանգրվան	38
Անտառի արքան	42
ՇՈՒՄԱՆ — Բաժանորդի սերը	
Յերբ զառ մայիսն յեկավ	48
Սրբունքներես փթթել են	50
Յերբեմ սիրում եմ	51



ԳԻՆԸ 5 Ռ.



МУЗЫКАЛЬНАЯ ХРЕСТОМАТИЯ

Гиз ССР Армении, Ереван